

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2015 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 4 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Ուսանողական հարցումների արդյունքների մասին ամբիոնների վարիչների հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ն. Ն. Մարտիրոսյան, Գ. Գ. Ջուլիակյան, Հ. Հ. Վարդանյան:

Ելույթ ունեցողները բավարար համարեցին ամիոնների և դեկանատի միջին գնահատականները:

ԼՍԵՑԻՆ.- Հունվարյան քննաշրջանի նախապատրաստման մասին Ա. Ռ. Մենեմշյանի հաղորդումը:

Ա. Մենեմշյանը նախ ամփոփեց երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգարքների արդյունքները, մտահոգություն հայտնեց ուման վարձը դեռևս չվճարած ուսանողների առիթով, ապա ներկայացրեց քննական ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստության մասին ամբիոնների վարիչներ Դ. Վ. Պետրոսյանի և Մ. Մ. Հովսեփյանի հաղորդումը:

Ամբիոնների վարիչները փաստեցին, որ պարբերական հանդիպումներ են ունենում մագիստրատուրայի և բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների և իրենց գիտական ղեկավարների հետ: Հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի վիճակը լավ գնահատեցին. գրեթե պատրաստ են, մնացել են տեխնիկական բնույթի մասնակի ուղղումներ, մինչդեռ առկա ուսուցման շրջանավարտներից շատերի աշխատանքը ամբիոնների վարիչներին դեռ չէր գոհացնում:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ  Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ